ԱՆԴՐԵԱՍ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՄԱՐԻԱՄ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼՅԱՆԻՆ

Անվանի գիտնական (երկրաբան-քիմիկոս), հրապարակախոս, հասարակական գործիչ, Թուրինի, Բավարիայի, Պետերբուրգի գիտությունների ակադեմիաների թղթակից անդամ, Բեռլինի, Բրեսլաուի, Ախենի համալսարանների պրոֆեսոր Անդրեաս Արծրունին նամակներ է գրել իր եղբայր Դրիգոր Արծրունու կնոջը՝ Մարիամ Մելիք-Աղամալյանին։ Դրանք պարունակում են ուշագրավ տեղեկություններ ժամանակի հասարակական անցքերի, «Մշակի» հրատարակումը վերսկսելու, գիտական դանդաղ հարցերի շուրջը, ինչպես և տեղեկություններ երկու գործիչների կյանքի ու գործունեության վերաբերյալ։ Նամակները հրապարակվում են մասնակի կրճատումներով։

Նամակները պահվում են Ս. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (Գր. Արծրունու ֆոնդ, №№ 204—206, 208—214, 216, 218, 219)։

ՎԱՐԱԶԴԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

1

20 սեպտեմբերի, 1893

СПб.

Սիրելի Մարիամ

Այս բոպևիս Ֆեոկտիստովի մոտից վերադառնալով հեռագրեցի քեզ «Бумаг еще нет, просят поторопить». *Այս խոսքերը բացատրելու համար ահա հետևյալը՝ Ֆեոկտիստովը ծեր մարդ է, հաստ, անշարժ, ինքը գործերի մասին, ինչպես երևում է, բոլորովին անտեղյակ, սկզբից հավատացրեց ինձ, որ խմբագիրը ընդունված է և խառնել է խմբագրին հրատարակչի հետ, որ ես նկատեցի, երբ նա քո անունը տվեց և ասաց, որ հաստատված ես։ Նկատելով որ ինքն շատ բան չգիտե, կանչեց իր* правитель канцелярии Адикаевский-*ին։ Սա ինձ ասաց, որ թղթերը չեն եկել և իրան վրդովված ցույց տվեց, որ այսքան ուշացնում են Թիֆլիսում։ «Շտապեցրեք, հեռագրեցեք,—ասում էր նա,—որ մենք վերջապես ստանանք կառավարչապետի կարծիքը Քալանթարի*[1] *մասին, որին ամեն կողմից գովում են և նկարագրում են իբրև ամենացանկալի խմբագիր։ Մենք ունենք արդեն երկու ամիս ցենզորների կոմիտեից դորա մասին, այնինչ կառավարչապետի կողմից չի գալիս թուղթը»։ Ես պատասխանեցի, որ վստահ էի, որ թղթերը արդեն ուղարկված են այնտեղից և այստեղ արդեն ստացվել են։ «Գուցե վաղը կգան», ասաց* Адикаевский-*ին, բայց առայժմ ոչինչ «տեղեկություն չունենք» և ավելացրեց, որ շատերը եկան տեղեկանալու, և նա նրանց ոչինչ ուրիշ բան ասել չէր կարող։ Մեկնելով՝ ես թույլատրություն խնդրեցի դարձյալ մտնել մի քանի օրից հետո և պատասխան ստացա՝* «пожалуйста».

Ուրեմն երկու-երեք օրից հետո դարձյալ կմտնեմ և հետևանքի մասին կհեռագրեմ...

... Այսօր այսքան միայն։ Առողջ եղիր և ողջունիր խմբագրատան անդամներին և ծանոթներին։ Այսօր ես երեկոյան Տիգրանյանցի[2] *մոտ եմ՝ նրա*

մոտ կլինի նաև բժիշկ Վարդանյանը, Քալանթարը (Ավետիք)[3] և կարծեմ էլի մի քանի մարդիկ։ Ցավում եմ, որ նրանց չեմ կարող լավ լուր բերել «Մշակի» մասին։ Ֆեոկտիստովի հետ ես այլևս գործ ունենալ ավելորդ եմ համարում, ինչպես երևում է գլխավոր մարդ է Адикаевский-ին, իսկ Ֆեոկտիստովն ինքն այնքան պառավ է, որ նա ինձանից ավելի արժանի կլիներ կարմիր արծվի շքանշանը ստանալու, որ ինչպես տրվում է հիմարացածներին։

Քո Անդրեաս

2

25 սեպտեմբերի, 1893
СПб.

Սիրելի Մարիամ

... Առաջին անգամ, որ գնացի Ֆեոկտիստովի և Ադիկայևսկու մոտ, որի մասին թե հեռագրովս, թե ամսվա 20-ին գրած նամակովս տեղեկացրի քեզ—այլևս չէի մտնում Главн. упр. по дел. печ., սպասելով քեզանից այն որոշ տեղեկությունները, որ խոստացել էիր հեռագիրներովդ։ Այսօր վերջապես 24-ից գրած հեռագիրդ ստանալով՝ վազեցի Ադիկայևսկու մոտ։ Նախ այնտեղ չէր, երկրորդ անգամ վերջապես տեսա նրան և հաղորդեցի, որ թղթերը ուղարկվեցան 23-ին։ Ես նրան հայտնեցի, որ դժբախտաբար սպասել չեմ կարող մինչև որ թղթերը գան և վճիռը կայանա, իսկ կխնդրեմ Գր. Ֆադ. Տիգրանովից, որ նա մոտավորապես մի շաբաթից հետո անցնի նրա մոտ և տեղեկանա գործի դրության մասին։ Նա ասաց, որ Տիգրանովին արդեն ճանաչում է և ինքն առաջարկեց, որ Տիգրանովը այն ժամանակ նրա մոտ փող թողնի, որ ինքն պաշտոնապես կարողանա հեռագրել՝ թե Քեզ և թե ցենզուրական կոմիտետին։ Ես հաստատ իմանալու համար դարձյալ հարցրի, թե կհամարի՞ արդյոք ցենզուրական կոմիտետը այս նորա հեռագիրը իբրև պաշտոնական, բայց նա պատասխանեց, որ. «ինչ իրավունքով չպիտի համարել պաշտոնական»։ Այս հեռագիրները ստանալուն պես իսկույն կարող ես հրատարակել մի հայտարարություն «Մշակի» մասին։ Ես Ադիկաևսկու մոտից իսկույն մտա Ավետիս Քալանթարի մոտ, որ իր կողմից ուզում էր այսօր եթ գրել Ալեքսանդր Քալանթարին։

Որքան կցանկանայի առաջինը լինեի, որ քեզ տեղեկություն տայի վճռական հաջողության մասին, բայց դժբախտաբար այստեղ մնալս սաստիկ երկարացավ առանց դորա էլ։ Առանց պաշտոնական արձակուրդ առնելու ես չեմ կարող դարձյալ հետաձգել իմ դասախոսություններիս սկիզբը, որ առանց դորա էլ հետաձգեցի մինչև հոկտ. 7-ը, այսինքն այստեղի տոմարով մինչև 5-ը։ Ախեն պետք է անպատճառ լինեմ երկու օր դասախոսությունների սկզբից առաջ, ուրեմն 14-ին կամ 15-ին, իսկ այդ իրագործելու համար այստեղից պետք է դուրս գամ ամենաուշ երկուշաբթի, այսինքն 9-ին, որովհետև Բեռլին ինձ անհրաժեշտ է մնալ մի երկու օր։ Խնդրեմ մի նեղացիր ինձանից, որ մինչև վերջ չեմ մնում, բայց ով գիտե, եթե էլի դարձյալ մի շաբաթ մնայի, էլի կատարյալ վերջը չէի տեսնի։

Այնուամենայնիվ ես հույսով եմ, որ «Մշակը» նոյեմբերի 1-ից լույս կտեսնի, եթե չնախապատվես առաջին համարը դուրս բերել հենց որ հասնի Քեզ պաշտոնական հեռագիրը։ Դա, իմ կարծիքով, կարող է լինել մի երկու շաբաթից հետո։

Ես դղվեցա այստեղի երկարաբանություններով ամեն տեղ և ամեն բանի մեջ։ Ադիկայևսկին էլ ուշունց էր տալիս, որ Թիֆլիսի մեջ այնքան «копались» «Մշակի» պատճառով, կատարելապես անհասկանալի է ինձ՝ կրկնում էր նա մի բանի անգամ. «Նրանք ինչ բանի էին սպասում, որ ամիսներով քաշքշում էին գործը»։ Նա համարձակությունով վերաբերվեց ինձ և ասաց ամեն բան, ինչ որ հարկն էր ինձ իմանալ, և այն էլ կարճ ժամանակի մեջ։ Այն Դինոցներոս Ֆեոկտիստովի մոտ ավելորդ համարեցի մտնել, քանի որ ինքն ինչպես երևում է ոչինչ չէ անում, այլ թողնում է բոլոր գործերը Ադիկաևսկուն։

Թեև անցաթուղթս այսօր ստացա, իսկ փողերս երեկ եկան, ես դեռևս մի քանի այցելություններ ունիմ անելու, այնպես որ վաղը չեմ հասնի* ամեն բան վերջացնելու։ Երկուշաբթի օրը, 27-ին (9 հոկտեմբերի) վճռապես ճանապարհ կընկնեմ։

Այսօր Տիգրանյանցի հետ տեսնվեցա նախքան տեսնեի Ադիկաևսկուն։ Իսկ այսօր երեկոյան դարձյալ նրա մոտ կմտնեմ և ամեն բան կհաղորդեմ նրան, ինչ որ նա ունի անելու։ Վաղը ճաշի եմ բժիշկ Վարդանյանի մոտ։ Ցանկանում եմ քեզ և «Մշակին» հաջողություն։ Ողջույն ամենքին։

Առողջ եղիր

Քո Անդրեաս

3

22 հոկտեմբերի, 1893
Սիրելի Մարիամ Ախեն

Քո նամակը՝ սեպտեմբերի 9-ին գրած, ես ստացա երեկ և շատ շնորհակալ եմ քեզանից այն մանրամասն տեղեկությունների համար, որ տալիս ես ինձ «Մշակի» գործի առիթով։ Չնայելով որ հեռագրովդ ես ավելի նոր և ավելի ուրախալի լուր ստացա, դարձյալ և նամակիդ մեջ պարունակված մանրամասները ինձ համար մեծ նշանակություն ունին։ Մի բան միայն թույլ տուր ինձ նկատել, իզուր ես ինձ հայտնում շնորհակալությունդ այն առիթով, իբր թե իմ աշխատանքը որևէ ազդեցություն է ունեցել գործի ընթացքի վերա։ Դու ինքդ քաջ գիտես, որ ես իսկապես ոչինչ հետևանքի չհասա։ Թիֆլիսում զեկուցումս եղավ ոչ այն ժամանակ, երբ ինձ խոստացած էին, և եթե մեկը շտապեցրեց դարձյալ ես չէի, այլ դու ինքդ։ Պետերբուրգում ինձ ոչ միայն խոստացան, այլ իրանք առաջարկեցին հեռագրել պաշտոնապես ցենզուրական կոմիտեին, բայց այնուամենայնիվ ետ կանգնեցին այս իրանց խոստումը կատարելուց, իրանց առաջարկածը իրագործելուց, որպես տեղեկացա Գր. Տիգրանյանցից երեկ ստացած նամակից։ Այո, ես ցանկություն ունեի Քեզ և «Մշակին» օգնել, բայց իմ ցանկացածը իրականություն չդարձավ։ Թողնենք այդ, գլխավոր բանն այն է, որ «Մշակը» դարձյալ կլինի, և այդ ոչ միայն ընդհանրության պահանջի համար մեծ մխիթարություն է, այլև քեզ անձամբ ուժ և մխիթարություն կտա։ Ես ուրախ, անչափ ուրախ եմ այդ հետևանքով, թեև էլ ավելի լավ կլիներ, եթե ընդմիջումը առավել կարճ լիներ, շուտ անցներ։ Բայց ուրիշ կողմից այն էլ պետք է ասել, ո՞վ գիտե, գուցե այդ ուրա-

* Այդպես է տեքստում (Վ. Վ.)։

խությունը, որ այժմ կտիրե ժողովրդին, կարտահայտվի առավել բազմաթիվ ստորագրությունով և դորանով առավել անխախտ հիմք կձգի «Մշակը» հասարակայնության մեջ, առավել հաստատ կլինի նորա գոյությունը։ Գուցե հասարակությունը կուզենա Գրիգորի հիշատակը դրանով սրբությամբ պահել, որ պաշտպան կհանդիսանա նրա հիմնած գործին։ Ամենայն հաջողություն ցանկանում եմ Քեզ և այն ազնիվ երիտասարդությանը, որ խմբվել է «Մշակի» դրոշակի շուրջը, որ հաստատ կամքով վճռել է «Մշակից» քարոզած մտքերը ընդունել, յուրացնել և հաղթող հանդիսանալ։

Դեպի Քեզ մի խնդիրք ունիմ՝ երբ Գորբովսկին, իր խոստման համեմատ, այս տարվա բանակատեղափոխները քեզ կբերի, մի ուղարկիր դրանք ինձ, այլ ընդունիր նրանց իբրև իմ բաժանորդագիր «Մշակի» համար։ Եթե այս իմ խնդիրքս չկատարես, շատ կվիրավորես ինձ։

Ես հասա այստեղ ամսի 16-ին և այնքան գործ գտա այստեղ դիզված, որ ստիպվեցա առաջին երեք օրերը ամբողջապես նվիրել պաշտոնական թղթեր և նամակներ գրելու։ Ես հաշվեցի, որ այդ առաջին երեք օրվա ընթացքում ընդամենը գրեցի 36 նամակներ, բաց նամակներ, հեռագրեր և պաշտոնական թղթեր։ Հետևյալ օրերը գործունեությունն առավել հանգիստ դարձավ, այնպես որ հույս ունիմ մի երկու-երեք օրից հետո կսկսեմ դարձյալ աշխատել, շարունակել իմ հետազոտությունները։ Դասերս ես սկսեցի գալուս մյուս օրը, այսինքն ամսիս 17-ին։

Շնորհակալ եմ քեզանից, որ ուղարկեցիր ինձ «Կովկասի» կտորը կաթողիկոսի օծման մասին։ Ինձ շատ հետաքրքիր կլիներ տեղեկանալ, թե ինչ կպատմե Մարկոսյանը[1] Էջմիածնի մեջ ընդունված տպագրությունների մասին։ Առհասարակ շատ շնորհակալ կլինեի, եթե մի մի անգամ գրեիր այնտեղի գործերի և անելիքների մասին, Խրիմյանի տրամադրության մասին և այլն։ Ուրախալի բան կլիներ, եթե Արիստակես Սեդրակյանի[2] նախագուշակությունը իրագործվեր և Խրիմյանը Էջմիածնում շուտով հասկանար ում կողմն է ազնվությունը և իրավունքը և ովքեր էին, որ կամենում էին նրան մոլորեցնել։ Իրանց ձեռքումը խաղալիք դարձնելու նպատակով...

Ես ինչպես խոստացել եմ, հույս ունիմ եկող տարի գալ դարձյալ Կովկաս, բայց ոչ թե ամբողջ ժամանակ Թիֆլիս նստելու համար, այլ Արարատը և Ալագյոզը տեսնելու և հետազոտելու համար։ Բայց այդ դիտավորությունս իրագործելու համար ես շատ պետք է աշխատեմ, մի մեծ մենագրություն վերջացնեմ (монография), որ շատ աշխատանք և ժամանակ կպահանջի, եթե այն ձևը պիտի ստանա, որ ինձ գոհացնե...

Քո Անդրեաս

4

8 դեկտեմբերի, 1893
Aachen

Սիրելի Մարիամ

Ես պարտքս եմ համարում հայտնել Քեզ իմ շնորհակալությունս թե հիշված նամակիդ, թե հեռագրիդ համար։ Իմ չգրելու պատճառը իսկապես այն է, որ ես այժմ շատ տրամադրված եմ աշխատելու, մի բան որ միշտ չէ լինում

ինձ հետ, ես շտապում եմ օգուտ քաղել այդ տրամադրությունից, որ քանի կարելի է, վաղ վերջացնեմ մի մեծ աշխատանք, որ ինձ այժմ զբաղեցնում է։ Այդ աշխատանքի վերջանալուց կախված է՝ իրավունք կղգա՞մ, արդյոք, իմ խոստացած այցելությունը Կովկասին, եկող հուլիսի վերջերին ճանապարհ ընկնելով, թե ոչ։ Իմ վերջապես լույս տեսած գիրքը ինձ արգելք եղավ այժմյան աշխատանքս առաջ տանել, բայց այսուհետև շարժառիթ չունիմ դրա վերջացնելը հետաձգելու, քանի որ ուժ ու տրամադրություն ունիմ աշխատելու։ Այսքան իմ լռությունս պարզելու համար։ Այժմ գանք այն հարցերին, որ Քեզ ավելի են հետաքրքրում։

«Մշակի» առիթով, որի առաջին համարից հետո դրա մասին ես հեռագրել էի քեզ—ինձ հետևյալ 6 համարները հասան, կարող եմ անկեղծությամբ շնորհավորել խմբագրին և խմբագրական խմբին։ Համարները անչափ հաջող են և ես հավանում եմ այն հաստատ արտահայտության ազնիվ մտքերի, ինչպես նա երևան է դալիս ամեն մեկ համարում, թե առաջնորդողների, թե այլ հոդվածների և ներքին լուրերի մեջ... Ես ցավում եմ միայն, որ ինձ անհայտ են մնում այս կամ այն հոդվածի գրողները, որոնց ես առանձնապես իմ շնորհավորությունս կմատուցեի, մի հոդված ինձ երևցավ պ. Սպանդարյանի գրչից բխած, մի այլ՝ պ. Տիգրան Հովհաննիսյանի է[1]։ Այսպես չէ՞։ Շատ հավանեցի «Հիմնադիր Գրիգոր Արծրունի», դա արժանավոր ձև է «Մշակի» անցյալը տալու համար։

... Ցավով նկատում եմ «Մշակից» և տողերի մեջ կարդում եմ, որ էջմիածնի մեջ տիրապետում է խառն ու շփոթ անհաստատամտություն։ Հույս ունենանք, որ դա ժամանակավոր և շուտ անցողական դրություն մի է, եթե ոչ—սալիտաս։

Ուրեմն դու մերժում ես ընդունել բանակատեղի եկամուտը «Մշակի» համար։ Ես իհարկե անզոր եմ համոզել քեզ և ստիպել չեմ կարող։ Բայց գուցե չես մերժի ընդունել, և իսկապես իրավունք էլ չունիս մերժելու—այդ փողերը Գրիգորի արձանի օգտին։ Անունս, հասկանալի բան է, հիշվելու չէ «Մշակի» մեջ տպվող ցուցակների մեջ և ոչ ոք խմբագրության անդամներից էլ չպիտի իմանա ումից են եկել այդ փողերը։ Հույս ունիմ միայն, որ Գորբովսկին շուտով կհասցնի քեզ։

Նոյեմբերի 19-ին ես կորցրի այստեղի մի մոտիկ բարեկամիս, որ և իմ բժիշկն էր...

Դու ցանկություն ես հայտնում, որ ես «Մշակին» թղթակցեմ, կաշխատեմ իրագործել այդ ցանկությունդ։ Բայց գիտես, որքան դժվարություն է պատճառում ինձ այժմ ճշտությամբ արտահայտել մտքերս հայերեն։ Ես սովոր եմ իմ գրածս շատ խիստ կերպով քննադատել և ինձ հուսահատեցնում է, երբ որ ինձ չէ հաջողվում իսկությամբ այն ասել, ինչ որ ունիմ մտքումս և կուզենայի ամենքին անտարակույս կերպով հասկացնել։

Այնուամենայնիվ կփորձեմ։ Բայց պիտի իմանաս, որ իմ հոդվածները կարող են վերաբերվել միայն գերմանական կյանքի ներքին հարցերին, իհարկե այնպիսի հարցերի, որոնք ընդհանուր նշանակություն ունեն և գուցե մի որևիցէ նմանություն են ցույց տալիս մեր ներքին հարցերի հետ...

Քո Անդրեաս

«Մշակից» տեղեկացա Leclercq-ի[2] գրքի մասին «Ճանապարհորդություն դեպի Արարատ» և բերել տվի ֆրանսիական բնագիրը։ Չեմ կարող ասել, որ առանձնապես գոհ լինեի։

5

10 փետրվարի, 1894
Ախեն

Սիբելի Մարիամ

Դեկտեմբերի 24-ին գրած նամակդ ես իր ժամանակին, այսինքն հունվարի 14-ին, ստացա, բայց նորից մինչև այսօր անպատասխան թողի զանազան պատճառներով և մանավանդ իմ սեփական մեղքից։ Ես շատ զբաղված եմ, շտապում եմ արձակուրդներին, այսինքն՝ հուլիսի վերջերից սկսած մինչև հոկտեմբերի կեսը ազատ լինել և ճանապարհ ընկնելով, անդադար չմտածել, որ տանը թողել եմ անկատար աշխատանք, որին պիտի կրկին ձեռնամուխ լինեմ տուն վերադառնալով։ Դա անտանելի հոգեկան դրություն է՝ երբ մտքերի հետևել*, որոնք անընդհատ զուգահեռապես միմյանց հետ ընթանում են։ Որքան երջանիկ կլինեի, եթե կարողանայի շատ նյութերից, որոնք միշտ պաշարում են գլուխս, գոնյա մեկը մոռանալ, նորա մասին բնավ չմտածել։

Այն օրից, երբ վերադարձա այստեղ, կարող եմ ասել մի օր չեմ հանգչստացել, անընդհատ աշխատանքի մեջ եմ և այնուամենայնիվ <աշխատանքը> այնքան շուտ առաջ չէ գնում, որքան կցանկանայի։ Բայց թողնենք ինձ։

Ես շնորհակալ եմ, որ կանոնավոր կերպով հասցնում եք ինձ «Մշակի» համարները, որ ես իհարկե հետաքրքրությամբ կարդում եմ, ես ուրախանում եմ տեսնելով նրա մեջ այնքան ճոխ նյութ և այնպիսի մշակված հոդվածներ։ Ես ուրախությամբ ինքս էլ կգրեմ, բայց ժամանակս պակասում է, ճշմարիտն ասեմ, վստահություն էլ չունեմ։ Մարդս քանի որ ավելի ծերանում է, այնքան առավել խիստ պահանջներ է դնում իր սեփական արդյունաբերածի վերաբերությամբ։ Նա ավելի լուրջ կերպով է վերաբերվում դեպի գործը, ավելի մեծ ինքնաքննություն է գործում՝ իր գրչի տակից կամենում է միայն մշակված գրվածք տեսնել, ավելի խիստ է այն պատասխանատվության մեջ, որ իր վերա առնում է։ Թեև ես այժմ ավելի վարժ եմ գերմաներեն գրելում, բայց երբեք ձեռքից չեմ թողնում մի գրվածք, որի մասին կարող էին ասել, թե նա անմշակ է, անհաջող է գրած—գուցե ինձ առաջնորդում է մի տեսակ ինքնասիրություն, որովհետև ես այստեղ ընդհանրապես լավ ոճով գրողի անուն եմ վայելում։ Նույնը, ինչ որ ես պարտավորություն եմ զգում կատարել ոճի մասին, էլ ավելի ձգտում եմ իրագործել մտքի և բովանդակության վերաբերությամբ—իհարկե ամեն մարդ ասում է այն, ինչ որ կարող է, իր կարողության ընդունակությունների չափ, ես այսքանն էլ իմ պարտավորությունս եմ համարում գուցե դորա մեջն էլ ինքնասիրությունից դրդված։ ...Բայց ներիր, ես դարձյալ սկսեցի խոսել իմ մասին, այնինչ նպատակս կամ դիտավորությունս էր խոսել «Մշակի» մասին։ «Մշակը» շատ ծանր և դժվարին դեր ունի. վեր-

* Այդպես է տեքստում (Վ. Վ.)։

չին ժամանակները թե տաճկաց հյուպատոսի նամակները, թե «Нов. врем.» հարձակողական հոդվածը շատ անախորժ երևույթներ էին, որոնց պետք էր պատասխանել, բայց անհնարին էր։ Սարսափելի դրություն է ստիպողապես լռել, որովհետև միտք արտահայտել անհնարին է, արգելված է։ Ուրիշ կողմից, որքան կցանկանայի «Մշակի» էջերում այլևս չտեսնել անընդհատ բանակռիվ «Արձագանքի» հետ։ Դուք այդ օրգանը արհամարհում եք, «մերձիմահ» եք անվանում և այնուամենայնիվ շարունակում եք զբաղվել դորանով։ Ինչով է նա լավ «Նոր-Դարից»։ Դորան անտես եք առնում, սորան պատիվ եք անում Ձեր ուշադրության։ Նրան անդադար հիշելով, դուք նրան նշանակություն եք տալիս, դուցե նորա տեղությունը երկարացնում եք։ Ես անկասկած այն կարծիքի եմ, որ անբարոյական գործիչները պետք է անխնա հալածել, բայց դա վերաբերում է ավելի ուղղությանը, քան թե դորա ներկայացուցիչներին։ Ձեզ ինչ, որ սա Հովհաննիսյան[1] կամ այլ մի անուն է կրում։ Եթե նորան եք հիշում, նշանակում է, որ նրա ձեռքին որևէ ուժ, նրա գործունեության մեջ որևէ նշանակություն եք տեսնում։ Իսկ դա մեծ պատիվ է այդպիսիների համար, ավելորդ պատիվ։ Եթե մի ուղղություն վնասակար, անբարոյական եք համարում, ուղղեցնք Ձեր քննադատությունը դորա դեմ, պատերազմեցեք մինչև որ հաղթող կհանդիսանաք, մինչև ժողովուրդը Ձեզ կհասկանա... Ուզում էի ասել, որ «Մշակի» սատրագրությունը միշտ լավ չի կատարվում. երբեմն պատահում են աչքի ընկնող սխալներ, որոնք տպավորություն են գործում, իբրև թե անհոգությունից են մնացել չուղղված։ Գուցե այդ ասածներս պարոններին կերևա մանր ու չնչին քննադատություններ, բայց «Մշակը» առհասարակ եվրոպական մի թերթի տպավորություն է գործում և մանր բաների մեջ էլ պետք է պահպանի ներքին և արտաքին ներդաշնակությունը չկործանվելու համար։ ...Խառն լուրերի մեջ կարելի է մտցնել այնքան շատ գիտելիք, որն ավելի կրթիչ կերպով կազդեին ժողովրդի վերա։ ...Այս գուցե դա մանր ու չնչին բաներ են, բայց նրանք, կրկնում եմ, լուրջ «Մշակին» չեն սազում և նրան աննկարագրելի դարձնում։ Ես ինձ այդ մի քանի նկատողություններ թույլ տվի իսկ այն պատճառով, որ ընդհանրապես շատ գոհ եմ «Մշակի» թե բովանդակությունից, թե ուղղությունից։ Շատ լավ են պ. Մալխասյանի «Մատենագրությունները», կատարյալ եվրոպական։ Խնդրեմ ողջույններս մատուցեք խմբագրության բոլոր անդամներին՝ թե օրիորդներին և թե պարոններին։

Քո Անդրեաս

Իմ գիրքս[2] *շատ լավ ընդունելություն է ունեցել, բացի մասնավոր նամակներից, նրա մասին խոսվեցավ արդեն մի քանի անգամ մասնագիտական հոդվածների մեջ։*

6

18 մարտի, 189[illegible]
Aachen

Սիրելի Մարիամ

Արդեն մի քանի օր է, որ նամակդ (փետրվար 14 գրած) ստացա, բայց ինձ չհաջողվեցավ նորան պատասխանելու։ Ես շատ գոհ եմ, որ իմ՝ «Մշակի»

մասին հայտնածները Ձեր ամենքիդ համաձայնությունը ստացան։ Երբեմն հեռվից կարելի է ավելի անկողմնապահ դատել, քան թե առարկան մոտիկից տեսնելով, սա մի սկզբունք է, որ գործադրելի է շքեղարվեստական, այսինքն նկարչական արդյունքը քննադատության մեջ, եթե ես այնուամենայնիվ և մի քանի մանրամասների վերա ուշադրություն դարձրի, դա այն պատճառով է եղել, որ ինձ, ինչպես «Մշակի» ամեն ընթերցողին, անկասկած ցանկալի է նրան կատարելապես ներդաշնակ տեսնել նրա ամեն մասերի մեջ։ Ես քեզ արդեն հայտնեցի՝ ինչ է պատճառը, որ ես դժվարանում եմ հոդվածներ գրել և այս անգամս էլ մի հոդված չեմ ուղարկում։ Դա իհարկե չէ նշանակում, որ երբեք չեմ գրի։ Դորա համար ինձ մի անգամ պիտի ստիպես և այնուհետև կշարունակեմ, գուցե իրավացի է այն խոսքը, որ առաջին քայլն է դժվար։ Շատ հավանեցի ես երկու առաջնորդողները «Սկզբունք և անձնավորություն» վերնագրով, դրանք մշակված և արդար հիմքի վրա կանգնած հոդվածներ էին։

Ես մտածեցի, բայց այդ միտքը իրագործելուց առաջ ուզում էի խմբագրության կարծիքը լսել, արդյոք լավ չէ՞ր լինի, որ այստեղի լրագիրների մեջ ժամանակ առ ժամանակ տեղեկություններ տալի այնպիսի անցքերի և եղելությունների մասին, որոնց վերա այնտեղ անհարմար կամ անհնարին է գրել։ Օրինակի համար ես մի քանի նկատողություններ կարող էի տալ սովի մասին և այն պայմանների վերա, որոնց մեջ ձգում է ցենզուրական խստությունը այնտեղի հասարակության ձգտումը սովածներին օգնելու ցանկության գործի մեջ։ «Մշակի» տողերի մեջ կարդալ իմացողը կարող էր շատ անգամ այստեղ պարզ կերպով չարտասանածը հայտնել և եվրոպական հասարակությանը այնտեղի անախորժ պայմանների վերա ուշադրությունը դարձնել։ Բայց այս բոլորը ես անում եմ այն նպատակով, որ հարցնեմ Ձեր կարծիքը և չիցե թե այսպիսի լուրեր բերելով այստեղի լրագրերի մեջ վնասեի «Մշակին»։ Ավելի մանրամասն իմ միտքը մեկնելու ավելորդ եմ համարում, դուք առանց դորա էլ կհասկանաք ասածս։ Ուրեմն սպասում եմ այդ հարցի պատասխանին։ Ես արդեն պատրաստ էի նամակիդ վերա հիմնվելով մի «թղթակցություն» ուղարկել այստեղի (այսինքն Բեռլինի) լրագիրներից մինին, բայց ետ կանգնեցի և նախապատվեցի նախ և առաջ վերևի հարցը առաջարկել։

«Մշակի» ակնարկներից երևում է, որ Էջմիածնի գործերը խառն և անգլուխ են. մի զորեղ ղեկավարող ձեռք չկա, իսկ խրիմյանը անծանոթ է այն շրջանի ոգուն և ուզղությանը, որի մեջ նրան վիճակված է գործելու։ Ինքն հաստատուն պրոգրամ չունի, այլ միայն մի քանի իդեական ցանկություններ, որոնց իրագործելու համար շավիղը նրան անծանոթ է և անծանոթ կմնա։ Ամենքին «ողջույն» ասելով, իհարկե բան չի դուրս գա, եթե զորանով է վերջանում նրա վարչական սկզբունքը և գործունեությունը։ «Ողջույն» ստանալուց հետո ամեն մեկը իր կողմը կերթա և կանի ինչ որ ուզում է, անսկիզբ, աննպատակ և կամ ոչինչ չի անի։

Ներփակված ուղարկում եմ մի թղթակցություն Պոլիսից, որ գուցե հետաքրքիր կլինի քեզ և գուցե կարելի է և «Մշակի» մեջ հաղորդել։ ...Իմ մասին առանձին բան հաղորդելու չունիմ։ Սեմեստրը վերջացավ ահա մի քանի օր է և ես այս պատճառով սեփական աշխատանքի համար ավելի շատ ազատ ժամանակ ունիմ։ Բայց ամեն բան այնքան արագ առաջ չէ ընթանում, որքան ցանկալի կլիներ։ Դասերը ապրիլի 9-ին դարձյալ սկսվելու են, իսկ ես ար-

ձակուրդից օգուտ կքաղեմ, որ մի քանի օրով գնամ Դրեզդեն և Բեռլին։ Իհարկե, ոչ թե լոկ մի առավել զարգացած կյանք վայելելու համար, այլ գործով։

Ես մի թարգմանություն վերջացնելու վրա եմ, մի մասնագիտական ռուսերեն գրվածք, որ գերմաներեն թարգմանեցի և այժմ ուզում եմ Բեռլինում մի հրատարակիչի հետ խոսել։ Մի քանի հարյուր մարկ եթե տա, դա մի ցանկալի նպաստ պիտի լինի ճանապարհորդությանս ծախսերը մասամբ ծածկելու համար։ Եթե անսպասելի արգելք չպատահի և ես ճշմարիտ Կովկաս կարողանամ դալ այս ամառ, ես չպիտի նստեմ Թիֆլիսի մեջ, այլ կերթամ դեպի Հայաստանը։ Միայն վախենում եմ, որ այս տարվա անբերրիությունը և սովը շատ արգելք կպատճառի ճանապարհներին և որ միայն գումարներ ձեռքին կարելի կլինի իրագործել այն ծրագիրը, որ ես աչքի առաջ ունիմ։

Խրիմյանին հետևելով, ես էլ ողջունում եմ, բայց սահմանափակում եմ իմ ողջույններս խմբագրության վերա։

Քո Անդրեաս Արծրունի

7

14 մայիսի, 1894
Aachen

Սիրելի Մարիամ

Ես շատ մեղավոր եմ քո առաջ, որ մարտի 27-ին գրած նամակդ, որ ինձ այստեղ հասավ ապրիլի 18-ին, մինչև օրս անպատասխան թողի, ես զատկից հետո 14 օրով գնացել էի Դրեզդեն («Դրեսդիզ») և Բեռլին և վերադարձա այստեղ ապրիլի 16-ին։ Նամակդ, դորա վերա երկրորդ օրը ստանալով, այնքան գործ գտա այստեղ, որ օրից օր ետ էի ձգում պատասխանս։ Բայց այսօր գոնյա մի քանի տող գրում եմ, որովհետև վաղը 6 օրով գնում եմ ուսանողներիս հետ էքսկուրսիա և չէի ցանկանա էլի այսքան ժամանակ լռել, նամանավանդ, որ հաստատ գիտեմ, թե այստեղ վերադառնալով, անպատճառ բազմաթիվ գործ կգտնեմ անհետաձգելի։

Շատ ուրախ եմ, որ խմբագրությունդ թույլ է տալիս երբեմն թղթակցություններ կազմել այստեղի լրագիրների համար—ես դորանից օգուտ կքաղեմ։ Բայց դորա համար լավ կլիներ, որ ոչ թե «Մշակից» միայն հավաքեի տեղեկություններս, այլ ժամանակ առ ժամանակ ուղղակի ընդունեի ձեզանից... Բայց անկասկած ուղարկվող տեղեկությունները պիտի կատարյալ ճիշտ լինեն, եթե ոչ հերքումներ կգան որևիցէ կողմից և այստեղի լրագիրները այնուհետև անհավատարմությամբ կվերաբերվեն։

«Մշակը» կարդալով ես իսկապես զարմանում եմ, որքան թույլ է տալիս ցենզուրան։ Պիտի ասել, որ և եվրոպական լրագիրները, թեև այսպիսի հիմնարկություններից ազատ են, բայց առավել ազատ կերպով միայն բացառիկ դեպքերում են գրում, երբ, օրինակ, որևիցէ զեղծումների մասին են խոսում,

կամ այնպիսի լրագիրներ, որոնց կարծիքով ամեն բան վատ է և փոփոխության պիտի ենթարկվեր, մի խոսքով ծայրահեղ կուսակցությունների թերթերը։ ...Ուրախ եմ, որ «Մշակի» ստորագրությունը այնքան հաջող եղավ այս տարի և խմբագրությանդ գրությունը լավանում է։

Ես նախապատրաստություններ եմ տեսնում Արարատի կողմը գնալու համար։ Զբաղված եմ այն շատ փոքր գրականությունը, որ կա այն երկրի մասին, կարդալու, ուսումնասիրելու։ Բայց դժբախտապես ամեն բան ձեռք բերել չեմ կարող։ Մի քանի գրվածքներ շատ խառն ու շփոթ են (օրինակ Աբիխի[1] գրվածքները) ես ամեն բանից տեսնում եմ, որ հետազոտություններովս նոր հետևանքի կարող եմ հասնել։ Դժբախտապես ժամանակը շատ կարճ է։ Եթե վաղը կարողանամ հեռանալ այստեղից, դա կլինի հուլիսի 23-ին, իսկ հոկտեմբերի կեսին անպատճառ ու դարձյալ այստեղ պիտի լինեմ, մանավանդ, որ ինձ այս տարվա համար (հուլիսից մինչև 1895 թ. հուլիսը) դեկան մեր բաժնի ընտրեցին և ես ուրեմն շատ ուշանալ չեմ կարող։ Իսկ Արարատի կողմերը բավական երկար կուզենայի մնալ, որ կարողանամ բավական հիմնավոր կերպով գործ տանել։ Հազիվ երեք ամիս ունիմ ուրեմն, ճանապարհն էլ հետը հաշվելով։

Հույս ունիմ շուտով դարձյալ կգրեմ՝ առ այժմ խնդրում եմ ընդունես և խմբագրության անդամներին էլ մատուցանես իմ ջերմ ողջույններս։

Քո Անդրեաս

8

12 հունիսի, 1894
Aachen

Սիրելի Մարիամ

Մի քանի օր է ահա, որ ստացա մայիսի 14-ին գրած նամակդ, բայց միայն այսօր կարողանում եմ պատասխանել։

Ցավալով տեղեկացա նամակիցդ, որ այնտեղի եկեղեցական և էջմիածնի գործերը փոխանակ կարգի գալու, ավելի և ավելի շփոթվում են, «Մշակիցն» էլ այդ բանը երևում է, թեև նրա մեջ միայն ակնարկներ են լինում։ Ուրախալի էր ինձ «Մշակիցս» տեղեկանալ, որ կառավարությունը պաշտոնապես թույլ է տվել նպաստները, թե Երևանի նահանգի և թե Թուրքիայի հայերին։

Իմ ճանապարհորդությունս դեպի Կովկաս ճշտությամբ դեռևս որոշած չեմ։ Հույս ունիմ, որ շատ ուշ չեն նշանակի քննությունները Bonn քաղաքում նիստ ունեցող քննական մասնաժողովի կողմից։ Եթե հուլիսի 20-ից ավելի ուշ նշանակելու լինին, ես պիտի խնդրեմ, որ իմ տեղ այս անգամ մի այլ քննողի դիմեն։ Առանց դորա էլ արձակուրդը կարճ է, իսկ ճանապարհը մինչև որ Արարատի կողմերը հասնեմ, բավական երկար։ Առժամանակ կխնդրեի իմ դիտավորության մասին «Մշակի» մեջ ոչինչ չհիշել, որովհետև ո՞վ գիտե դեռ ինչ արգելքներ կարող են պատահել։ Ցավում եմ, որ «Մշակը» տպեց իմ՝ դեկան ընտրվելու մասին։ Մարդիկ, որոնք ծանոթ են գերմանական համալսարանական պայմաններին, գիտեն, որ դա առանձին մեծ պատիվ չէ, նամանավանդ որ այստեղ, Ախենի մեջ, մեզանից ամեն մեկը այդ պաշտոնը վարում է հերթով՝ մի մի տարի. դա պետք է համարել մի պարտավորություն, որից ոչ ոք

իրավունք չունի հրաժարվելու, և ոչ թե պատիվ։ Եթե չընտրեն՝ կլիներ անպատվություն։ Այստեղի պայմաններին անծանոթը կարող է հիշված լուրը կարդալով կարծել, որ ինձ երևի մի մեծ պատիվ արած են և այդ իսկ ցավում եմ։

Ես անչափ զրաղված եմ թե դասերով, որ շաբաթական 10 ժամ են, թե լաբորատորիայիս մեջ և ուսանողներին օգնելով, թե սեփական աշխատանքներով, որ զրեթե ժամանակ չի մնում հոդվածներ գրելու համար, այնինչ դա անպատճառ հարկավոր կլիներ, որ ճանապարհ ընկնելով փոքրիշատե ավելորդ փող հետս վերցնել կարողանայի, քանի որ նախատեսել չեմ կարող, որքան մեծ կլինի ծախսերը։ Մանավանդ այն տեղերում, ուր սով է տիրում։ «Մշակի» մեջ կարդացի, որ մի պարոն Պաստուխովի՝ անցյալ (1893) տարի Արարատի գաղաթը բարձրացավ և կովկասյան աշխարհագրական ընկերության մեջ դեկուցում կարդաց իր այս ճանապարհորդության մասին։ Լուրը շատ կարճ էր և ես նորանից չկարողացա տեսնել, թե ինչ հետևանքի է հասել պարոնը, ես շատ կխնդրեի, որ եթե այս դեկուցումն արդեն տպվել է մի տեղ և դժվար չլիներ մի օրինակ ճարել, դու ինձ ուղարկեիր։ Գուցե Քալանթարը անդամ է աշխարհագրական ընկերության և այնքան բարի կլինի ինձ օգնել այդ բանի մեջ, որով ինձ շատ կպարտավորեր։

«Մշակը» միշտ շատ հետաքրքրությամբ կարդում եմ և շատ հաջող եմ գտնում հոդվածները։ Մեծ մասը անչափ լուրջ և մշակված են և լավ տպավորություն կանեն նաև, եթե տպվեին մի եվրոպական լրագրի մեջ։ Շատ շնորհակալ եմ, որ խմբագրությունը շարունակում է ինձ ուղարկել համարները։ Ճանապարհ ընկնելուս օրը դեռևս կհաղորդեմ։ Առայժմ ընդունիր իմ անկեղծ ողջույնները, որ խնդրում եմ նույնպես մատուցանել խմբագրության անդամներին։

Քո Անդրեաս

Ես իմ աշխատանքներս չեմ ուղարկում, որովհետև կարծում եմ, որ դրանք այնտեղ ոչինչ նշանակություն չեն կարող ունենալ։ Նորերս մի գիրք հրատարակեցի ու մանավանդ արտասահմանում Իտալիայի և Ֆրանսիայի մեջ լավ ընդունելություն ունեցավ և գովասանական կրիտիկաների տպագրելու առիթ տվեցին։

9

6 օգոստոսի, 1894
Ղամարլու

Սիրելի Մարիամ

Մենք սաստիկ ուշացանք ճանապարհին։ Նախ և առաջ Դիլիջանի մեջ պիտի սպասեինք Պաստուխովի տեղեկություններ<ին>, որոնց պատճառով նստեցինք այնտեղ մի ամբողջ օր։ Երկրորդ անգամ ուշացանք Ծաղկաձոր՝ մեջ, որովհետև նահանգապետ Ֆրեչեի հրամանը իմ откр.<ытый>лист-ի մասին շատ ուշ կարդացին նորա կանցելիարիայի մեջ։

Երևան հասնելուն պես ես գնացի քրոջդ մոտ և ոչ նամակդ, ոչ էլ պատկերները մոռացա, նախքան նորան տեսնեի, չուզեցա հեռագրել, իսկ նա ան-

պատճառ ցանկանում էր ինքն քեզ հեռագիր ուղարկել, ինչպես և կատարեց հետևյալ օրը։ Ամսիս 4-ին եկավ Երևան Պաստուխովը, որին մենք ամենքս շատ հավանեցինք։ Երեկ մեկնվեցանք Երևանից, ինչպես հեռագրել էի քեզ։ Էջմիածին չգնացինք, որովհետև Պաստուխովին սպասում էինք ամբողջ օրը և չուզեցանք հեռանալ, որ նրան անպատճառ տեսնենք։ Առժամանակ միասին ենք և ես շատ կցանկանայի նրա հետ բարձրանալ։ Բայց կարելի է, որ ընտելանալու համար, լավ կլիներ մեզ նախ փոքր Մասիս բարձրանալ, այդ կվճռենք այսօր կամ վաղը, հասնելով Սարդար-բուլաղ։ Ես գրում եմ անկապ, որովհետև շտապում եմ։ Այս րոպեիս եկան Արարատից երեք պարոններ, որոնք չափազանց արագությամբ բարձրացան։ Այսինքն դոցանից մինչև գագաթը հասել է միայն մեկը, մի քրդի հետ։ Պատմում են, որ շատ ձյուն է և շատ ցուրտ։ Տեսնենք մեր բանը ինչպես կլինի։ Ցավալի է, որ եղանակը փոխվել է։ Երբ որ կիջնենք, կգրեմ...

Քո Անդրեաս

10

24 օգոստոսի, 1894
Երևան

Սիրելի բարեկամ

Այս ամբողջ ժամանակ ինձ չէր հաջողվում քեզ նամակ գրելու կամ ճանապարհից հոգնած, կամ մարդիկներով շրջապատված, շատ անգամ տեղ էլ չունեի, որտեղ նստեմ և գրեմ։ Իմ ճանապարհորդական օրագիրն էլ կարողանում էի միայն հեռագրական ստիլով գրել, այնպես որ դա բոլորովին անմշակ, միայն անկարևորություններ է պարունակում, որոնք գուցե միայն ինձ հասկանալի են։ Այս է պատճառը, որ ոչ մի թղթակցություն չուղարկեցի «Մշակին»։ Եթե հասարակ նամակն անգամ չէր հաջողվում, որքան պակաս պիտի հաջողվեր մի սիստեմական թղթակցություն։ Իմ հեռագիրներից քեզ իսկապես ճանապարհորդության ծրագիրը հայտնի դարձավ և դորա մասին գիտեմ «Մշակի» մեջ տպված տեղեկություններից։ Երևանից ամսիս 5-ին մենք հեռացանք Կամարլուի և Արալխի ճանապարհով դեպի Սարդար-բուլաղ, ուր հասանք 7-ին։ Ամսիս 8-ին Պաստուխովը մեկնեց դեպի մեծ Արարատ, մեզ խորհուրդ տալով վարժվելու համար բարձրանալ փոքր Մասիսը։ Ես այդ դեպքում տեսա որքան ետ սովորեցի լեռների մեջ ման գալը։ Մինչև անգամ այս ճանապարհը, որ սովորած մարդիկ հեշտությամբ են կատարում, ինձ համար շատ դժվար եղավ և ես մյուս օրը, փոխանակ Պաստուխովին հետևելու, ստիպվեցա մի օր հանգստանալ և գրեթե հուսահատվեցա։ Վրա երրորդ օրը դարձյալ բարձրացա փոքր Մասիսը, բայց ավելի դժվար կողմից։ Այդ երկրորդող փորձը ավելի հաջող անցավ և ինձ փոքր ի շատե վստահություն վերադարձրեց։ Բայց, այնուամենայնիվ, ես վճռեցի մեծ Մասիսի գագաթը չբարձրանալ, այլ բավականանալ նրա զառիվայրերի ուսումնասիրությամբ։ Այդ կատարելուց հետո, մենք հեռացանք Սարդար-բուլաղից, այցելեցինք Ախուրին, Ս. Հակոբի աղբյուրը և Ղորղանի ավերակների միջով անցանք Իգդիր։ Այդտեղ, մյուս օրը, մեզ ներկայացավ մի մեծ պատգամավորություն։ Ամեն կողմից սկսեցին հրավիրել թեյի, ճաշի, ընթրիքի և այլն։ Եկող օրը մենք մեկնեցանք դեպի Կողբ և Կաղսվան, որտեղ նմանապես շատ սիրալիր ընդու-

նելություն վայելեցինք։ Հինգ օրվա բացակայությունից հետո վերադարձանք Իգդիր, ուր պիտի խոստանայինք հյուր մնալ Ներսիսյանների տանը։ Իգդիրի ինտելիգենցիան մեզ վերա շափազանց լավ տպավորություն գործեց, գուցե ավելի, քան բոլոր մեր անցած տեղերը։ Իգդիրից ես չմտա էջմիածին, թեև դա իմ ճանապարհի վերա էր, այլ ուղղակի եկա այստեղ, զգալով որ ինձ հարկավոր է փոքր ինչ հանգստանալ և բազմաթիվ տպավորություններս կարգի բերել։ Պ. Պ. Վաչյանը և Հակոբյանը բաժանվեցան ինձանից և գնացին էջմիածին։ Իսկ ես նրանց խոստացա մյուս օրը մի քանի ժամով նմանապես այնտեղ գալու։ Երեկ ես խոստումս կատարեցի և նախ և առաջ պ. Եզեկյանի[1] տունը գնացի, իսկապես որ ուրիշ ձեռքը չընկնեմ։ Եզեկյանը ինձ հետո ասաց, որ իմ գալուս մասին հեռագրեց խմբագրությանը։ Երեկվա օրը հարմար և անհարմար էլ էր՝ Արիստակես եպիսկոպոսի տոնն էր (ծնունդ) և այդ պատճառով նա մի ճաշ էր տալիս իր Շողակաթ վանքումը։ Նա իմ գալս իմանալով ուղարկեց ինձ մոտ երկու մարդիկ և ասել տվեց, որ նա ինձ սպասում է իր վանքում և որ իմ կողմից ավելորդ է առանձին այցելություններ անել, որովհետև այն բոլոր մարդիկ, որոնց հետ ես պիտի տեսնեի, նրա մոտը կլինեին և ես ուրեմն կարող եմ ամենքին էլ մի անդամից տեսնել։ Ես շատ հավանեցի Երեմիա եպիսկոպոսին, որի հարևանն էի ճաշի ժամանակ։ Նույնպես շատ լավ տպավորություն գործեց ինձ վերա Դալուստ Տեր-Մկրտչյանը[2], որի հետ ես երկար խոսեցի։ Ծանոթացա նաև Լևոն Սարգսյանի[3] հետ, որ երկու շուշեցի հողաբարձուներով եկել էր էջմիածին գանգատվելու Կարապետ եպ. վերա։ Կաթողիկոսը սպահանջեց իր մոտ և այդ վերջինին, բայց ես գորան իհարկե չտեսա, որովհետև նրա բարեկամների շրջանը չմտա։

Երեմիա եպ. առաջնորդեց մեզ դեպի Հռիփսիմե վանքը, որի վանահայրը նա ինքն է և, որը նա վերանորոգում է շատ գեղեցիկ կերպով, ինքն ճարտարապետի դեր կատարելով։ Ճաշը պատճառ էր, որ ես ոչ ոքի հետ մասնավորապես առիթ չունեցա խոսելու։ Միայն մի քանի ակնարկություններով և միջանկյալ խոսքերով պիտի բավականանայի։ Բայց դրանք ինձ հասկանալի էին, որովհետև պ. Եզեկյանը ինձ դորանից առաջ բավական մանրամասն կերպով ծանոթացրեց դրության հետ։

Եզեկյանը երեկ դիտավորություն ուներ Երևանով Ալեքսանդրապոլ գնալու և որովհետև ես կառք վարձել էի Երևանից էջմիածին գնալու և վերադառնալու համար, կարողացա նրան մի տեղ առաջարկել կառքիս մեջ և այսպիսով նրա հասարակությունը ավելի երկար վայելել։ Նա դեռ այստեղ է և միայն վաղը շարունակում է ճանապարհը։

Կաթողիկոսը Բյուրական է և միայն այսօր պիտի վերադառնա, այսպիսով ես նրան չտեսա։ Զգնացի և Ստեփանեի[4] մոտ, որ Արիստակեսի ճաշին ներկա չէր, ասելով որ ոտքը վիրավորեց։ Պատճառը իհարկե այն է, որ նա դիպլոմատություն է գործում։ ...Վաղը գալու են այստեղ Վաչյանը և Հակոբյանը, և մենք միասին պիտի ուղևորվենք դեպի Արադած և այնտեղից դեպի Անի։ Վերադարձին կանցնենք դարձյալ էջմիածին, որովհետև ճաշը շատ ժամանակ խլեց։ Այն ժամանակ ես ավելի մանրամաս կխոսեմ թե Արիստակեսի, թե Երեմիա եպ. հետ և գուցե կտեսնեմ և կաթողիկոսին, եթե նա վերացրած լինի իր «անդադար ճանապարհորդությունները» և էջմիածին կլինի։ Ես հույս ունիմ, որ տասն օրից հետո էջմիածին կլինեմ։ Այնտեղից, կարծեմ, ուղղակի, այսինքն՝ Երևանով կճանապարհորդեմ դեպի Թիֆլիս։

Այսօր փոստ էի և ստացա երկու նամակ՝ մեկը արտասահմանից, մյուսը՝ Օդեսայից, որ դու ինձ ուղարկեցիր մեկը՝ 14-ին, մյուսը՝ 5-ին օգոստոսի։ Ստացա նաև առաջին նամակը, նախքան մեկնվեի դեպի Արարատ։ Այժմ, երբ կգրեմ, ինքս էլ չգիտեմ։ Այս րոպեիս գնում եմ քրոջդ մոտ և նրան տեսնելուց հետո, գուցե մի քանի խոսք էլ կավելացնեմ։

Առժամանակ ուրեմն վերջացնում եմ, քեզ և ամենքիդ ամենայն բարիք ցանկանալով։

Քո Անդրեաս

11

1 նոյեմբերի, 1894
Aachen

Սիրելի Մարիամ

Ես քո առաջ շատ մեղավոր եմ՝ նախ 12 օր անցկացրի առանց նամակ գրելու, չնայելով որ հեռագրովս խոստացել էի «bald» գրելու, երկրորդ, որ այս նամակովս էլ մի հողված «Մշակի» համար չեմ ուղարկում, վերջապես, որ ուշացրի վերադարձնել քեզ քո 100 ռուբ.։ Առաջին երկու զանցառությունների պատճառը, ինչպես ինքդ կենթադրես, չափազանց շատ պաշտոնական զբաղմունք են, որոնք առժամանակ գրեթե ամբողջ օրն են խլում ինձանից, այնպես որ ես դեռ չկարողացա սկսել մինչև անդամ մասնավոր պարապմունքս. բավականանալով առ ժամանակ միայն դասախոսություններովս։

Ինչ որ փողի է վերաբերվում՝ պետք է խոստովանեմ, որ այնքան հաշիվներ ունեի վճարելու, որ փողերս գրեթե հատան։ Բացի սորանից, Ռուսաստանցի այստեղի ուսանողները գրեթե ամենքն էլ անփող են այս րոպեիս, իսկ դասախոսությունների վճարը պետք է հատուցանեն մինչև ամսիս 5-ը*։ Նրանք այս նպատակով իրենց ընկերներից մեկին ուղարկեցին իբրև պատգամավոր ինձ մոտ, ինձանից փող խնդրելու և ես բավական շատ պետք է տայի նրանց։ Եթե ինչպես խոստացել են, փողս վերադարձնեն մինչև ամսիս կեսը, կամ վերջը, ես անհապաղ կվերադարձնեմ քեզ իմ պարտքս, եթե ոչ ստիպված կլինեմ խնդրել Քեզանից, որ թույլ տաս հաշիվս կարգի բերել հունվարի առաջին շաբթում։ Ես շատ ամաչում եմ այդ բոլորը քեզ ասել և խոստովանել և շատ-շատ ներողություն եմ խնդրում, որ այսքան անճիշտ հանդիսացա իմ պարտավորությունս կատարելու մեջ։ Ստիպելով ինձ ամոթս ճնշել իմ մեջ, անցնում եմ ուրիշ բաների։

... Ճանապարհը Թիֆլիսից Օդեսա լավ անցավ, չնայելով որ ծովը վերջին օրը բավական անհանգիստ էր։ Օդեսայից Վիեննա գնալով, մեր գնացքը մոտ մի ժամուկես ուշացավ, այնպես որ ես ստիպվեցա հասարակ գնացքով ճանապարհս շարունակել մինչև Լեմբերգը, իսկ այնտեղ մոտ 6 ժամ սպասել մինչև արագ գնացքը։ Բայց այժմ եմ հիշում այդ բաները, ես քեզ գրեցի արդեն Վիեննայից։ Վիեննա ես մնացի մոտ 4 օր և այստեղ հասնելով երեք օրից հետո սկսեցի դասերս։ Այս անդամ լսողներիս թիվը այնքան մեծ եղավ (30-ից ավել), որ լսարանս չէ ամփոփում նրանց, նստարանների թիվը լսողների թվից պակաս լինելով։ Ինձ տեղեկություններ հասան, որ հազիվ թե որևիցէ

* Եթե ոչ, նրանց կհեռացնեն ուսումնարանից։

համալսարանում (բացի Բեռլինի և Մյունխենի) այսքան լսողներ լինեն այս մասնագիտության լսարաններում, այս հաջողությունը ես իհարկե ինձ չեմ վերաբերում, այլ պատահական եմ համարում։

Շնորհակալությամբ ստացա «Մշակի» բոլոր համարները, նրանք, առանց Կովկասում եղած ժամանակը արդեն կարդացած էի, իսկույն եկավ և տարավ այստեղի միակ հայ ուսանողը։ Նորերը հետաքրքրությամբ կարդացի և շատ հավանեցի։ Շատ ուրախ եմ, որ Երեմիա եպիսկոպոսը եկել էր քեզ տեսության և շատ զարմացա, որ «Արձագանքը» իր սովորության հակառակ պատշաճ կերպով վերաբերվեցավ այդ իրողությանը։

Իմ լուսանկարները, որոնք մեծ դիրքով էին հանած, գրեթե առանց բացառության անհաջող դուրս եկան, երևի այն պատճառով, որ կեղևները (пленки) հին էին, իսկ փոքր դիրքի պատկերները գրեթե ամենքն էլ լավ եղան։ Նամանավանդ ուրախ եմ, որ Երվանդակերտի, Տալիշի, Աբարանի ձորի վանքերի (Հովհաննավանք, Մուղնի, Սաղմոսավանք) և այլն պատկերները շատ հաջող դուրս եկան, նույնպես հաջող է և Նղնիկի անշուք գերեզմանի պատկերը։ Ես շարունակում եմ տպել, բայց անձրևային եղանակը շատ խանգարում է ինձ։ Երբ որ ամբողջ ժողովածուն պատրաստ կլինի, կուղարկեմ քեզ մի օրինակ։

Այստեղ իսկույն խնդրեցին ինձանից, որ մի հասարակական դասախոսության ձևով մի նկարագրություն տամ իմ ճանապարհորդության մասին, բայց ես առժամանակ հրաժարվեցա մինչև որ լուսանկարներս պատրաստ և քարերս այստեղ հասած կլինեն։ Իհարկե, ամեն բան ինչ որ գրելու կլինեմ գերմաներին իմ ճանապարհորդության մասին, կուղարկեմ քեզ։

«Մշակից» տեղեկացա, նախազուշակությանս համեմատ, Թիֆլիսի պոլիտեխնիկումը հաղիվ թե հիմնվելու է։ Եվ ճշմարիտ, եթե տեղացիներին, որոնք բարձր ուսում ստացել են Ռուսաստանում՝ առանց պաշտոնի են Կովկաս, այլ աշխատում են քշել դեպի Ռուսաստան, ինչ միտք կունենար կովկասցիներին միջոց տալ իրենց երկրում բարձր ուսում ստանալ, առանց որի նրանք դիտցածը կարողանային դործ դնել նույնիսկ իրանց երկրի օգտին։ Թե քաղաքային վարչության, թե լրագրերի ագիտացիան այս հարցի վերաբերությամբ կմնա մի «Schlag ins wasser»* և նրանց ցանկացածը առժամանակ անիրագործելի հարցերի շարքում պիտի դասվի...

Քո Անդրեաս

12

17 դեկտեմբերի, 1894
Aachen

Սիրելի Մարիամ

Խնդրեմ մի նեղացիր ինձանից, որ ես բավական երկար ժամանակ տեղեկություն տված չեմ իմ մասին և մանավանդ որ այսօր էլ քեզ եմ գրում և ոչ թե «Մշակին», այսինքն, որ տպագրության համար նյութ չեմ ուղարկում։ Ես ծույլ եմ, որովհետև հոգնած եմ, անչափ հոգնած ամենօրյա պարտավորություններս կատարում եմ, բայց ուրիշ բանի կատարելապես անընդունակ եմ զդում ինձ։ Ինչ է այդ հոգնածությունը, ասել չեմ կարող, բայց նա ինձ խանգարում է և պարապմունքներիս մեջ, որոնք բոլորովին առաջ չեն գնում,

* Ջուր ծեծել։

այնինչ այժմ պետք է ավելացրած ուժերով աշխատեի, քանի որ շատ բաներ դիզվել են, սակայն անկատար են մնում։

Այստեղի լրագիրներն էլ լի են տեղեկություններով դժբախտ տաճկահայերի մասին։ Ներփակված ուղարկում եմ մի քանի կտոր «Köln Zeit»ից լրագրից, որոնց մեջ կտեսնես, թե ինչ սաստիկ լեզվով է խոսում նա Թուրքիայի՝ Բեռլինի դեսպանության դեմ։ Այդ է պատճառը, որ այժմ ամբողջ Գերմանիայի մեջ տրամադրությունը հայերի կողմն է։ Վասն զի «Köln Zeit»ն մի ահագին հեղինակություն ունի ամբողջ երկրում և հայտնի էր միշտ իբրև Թուրքիայի պաշտպան։ Իսկ եթե մինչև անգամ նա, Թուրքիայի կողմնակից լինելով, հանդես է դուրս գալիս Թուրքիայի պաշտոնական հերքումները առավել ստոր դասելով, քան իր թղթակիցների տեղեկությունները, հասկանալի է, որ հասարակությունն էլ նրա կողմը կլինի, չնայելով որ հակում ուներ սկզբումը, առաջին տեղեկությունները կարդալով, նրանց չափազանցեցրած համարի։

Այս օրերս հասան այստեղ իմ քարերը և ես կխնդրեի այս առիթով դարձյալ եպ. Մարկոսյանին իմ շնորհակալությունս հայտնել այն բոլոր նեղությունների համար, որ նա կրել է իմ պատճառով։ Այդ ինձ հիշեցնում է, որ ես ուզում էի հարցնել, հասցրե՞լ են արդյոք «Մշակի» խմբագրատուն և այն քարերը, որոնց մեր կառապանը կորցրել էր Կողբի ճանապարհի վերա և որոնք հետո գտնվեցան և պիտի հասցնեին խմբագրատուն։ Նյութերից մի քանիսը ես արդեն բաժանեցի ուսանողներին, որոնք հանձն առան քիմիական հետազոտության...

Քո Անդրեաս

13

30 դեկտեմբերի, 1894
Aachen

Սիրելի բարեկամ

Վերջապես, ահա ուղարկում եմ սորա հետ միասին մի թղթակցություն «Հայկական հարցի» մասին։ Ես նրան չստորագրեցի, և ոչ թե Ախենի, այլ իբր թե Քյոլնից ուղարկած վերնագրեցի։ Եթե անպատճառ հարկավոր կհամարես դու կամ խմբագրությունը, որ անունս ստորագրի, գոնյա տիտղոսը թող չդրվի, ինչպես սխալմամբ պատահեց այն հոդվածի տակ, որ գրել էի Թիֆլիս եղածս ժամանակ։ Ես ոչ թե ամաչում եմ մի հոդված, թեև նա մշակված չէ, այլ շտապ գրված է, ստորագրելու, ոչ էլ «Արձագանքի» կրիտիկայից կամ անձնական նկատողությունից եմ վախենում, այլ կարծում եմ, որ անստորագիր պիտի մնան և իմ գրվածները, ինչպես և բոլոր մնացածները։ Հասկանալի բան է, եթե մի որևիցե դարձվածք ճիշտ չէ, սխալ է, կխնդրեի, որ ուղղվեր։

Մի քանի օրից հետո կկատարեմ իմ խոստումներս, ներիր, որ այսքան անվստահելի հանդիսացա։

Այստեղից կամ, ճիշտ ասեմ, իմ մասին առանձին բան չունիմ հաղորդելու։ Ջեմ իմանում ինքս ինչի, բայց անդադար գտնվում եմ ծանր տրամադրության մեջ։ Աշխատանքս ինձ չի բավականացնում գուցե այն պատճառով, որ նա կամաց է առաջ գնում, իսկ այդ վերջին երևույթի պատճառը իմ

շարունակ հոգնածություն է, որից չեմ կարող ազատվել։ Ամեն պարտավորություններս կանոնավոր կերպով կատարում եմ, բայց գոհունակություն չեմ զգում, ամեն բան կատարվում է մեքենայաբար...
Ընդունիր ինքդ իմ բարեկամական ողջույնը։

Քո Անդրեաս

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

1. Խոսքը Ալեքսանդր Քալանթարի մասին է, որը 1893 թ. նշանակվեց «Մշակի» խմբագիր և թերթը խմբագրեց մինչև 1913 թ.։

2. Դրիգոր Տիգրանյանց—բժիշկ, հասարակական և կրթական գործիչ, Նոր Նախիջևանի հայկական թատրոնի հիմնադիրներից մեկը։

3. Ավետիք Քալանթար—Հասարակական և մշակութային գործիչ։

3

1. Հովհաննես Մարկոսյան—հրապարակախոս, «Մշակ» լրագրի երկարամյա աշխատակից։

2. Արիստակես Սեղրակյան—հոգևոր գործիչ, բանաստեղծ։

4

1. Տիգրան Հովհաննիսյան—իրավաբան, թարգմանիչ, գրական գործիչ, թղթակցել է «Մշակ», «Գործ», «Մուրճ» պարբերականներին։

2. Leclercq J.—ֆրանսիացի երկրաբան, ճանապարհորդ, ուսումնասիրել է Արարատ լեռը և հայկական այլ լեռներ։ Գրել է մի շարք աշխատություններ Հայաստանի մասին։

5

1. Արգար Հովհաննիսյան—իրավաբան, տնտեսագետ, հրապարակախոս։ Հիմնել և խմբագրել է «Գործ» և «Արծաղանք» պարբերականները։

2. Նկատի ունի 1893 թ. Բրաուն շվեյգում իր հրատարակած „Physikalische Chemie der Krijstalle" աշխատությունը։

7

1. Արիխ Հերման Վիլհելմ—գերմանացի երկրաբան, Պետերբուրգի ԳԱ օրդինատ ակադեմիկոս, Դորպատի համալսարանի ամբիոնի վարիչ. ճանապարհորդել է Հայաստանում, բարձրացել Արարատի գագաթը։ Հայկական լեռնաշխարհի մասին գրել է երեք հատոր գիրք։

8

1. Պաստուխով Անդրեյ Վասիլևիչ—ռուս տեղագիր. ճանապարհորդել է Կովկասում, բարձրացել Արարատի, Արագածի, Էլբրուսի և Կազբեկի գագաթները։

10

1. Ավետիք Եղեկյան—հրապարակախոս, մանկավարժ և թարգմանիչ, պաշտոնավարել է Արղությյան (Ալեքսանդրապոլ) և Ներսիսյան դպրոցներում, թղթակցել է «Մշակ», «Աղբյուր», «Տարազ» պարբերականներին, լույս է ընծայել բանաստեղծությունների ժողովածու («Փնջիկ», Թիֆլիս, 1901), թարգմանել է «Համլետը» և այլ երկեր։

2. Գալուստ Տեր-Մկրտչյան (Միաբան)— նշանավոր հայագետ, եղել է «Արարատ» հանդեսի խմբագիրը։

3. Լևոն Սարգսյան—պատմաբան, բանաստեղծ, հրապարակախոս, մանկավարժ։ Պաշտոնավարել է Լազարյան ճեմարանում, Ներսիսյան և Գայանյան դպրոցներում, խմբագրել է «Մուրճ» ամսագիրը։

4. Խորեն Ստեփանե—հրապարակախոս, խմբագրել է «Հայկական աշխարհ», «Մանկավարժանոց» պարբերականները։